# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով) փորձագետ ներգրավելու մասին

**1. Ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը.**

Փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքներ, մասնավորապես՝

1) Հանձնաժողովի տնտեսական սպասարկման աշխատանքների իրականացում,

2) Հանձնաժողովի տնտեսական գույքի պահպանության ապահովում, և ըստ անհրաժեշտության դրանց վերականգնման և համալրման մասին, առաջարկությունների ներկայացում,

3) Հանձնաժողովի աշխատակիցներին անհրաժեշտ ապրանքներով, սարքավորումներով, նյութերով և ավտոպահեստամասերով ապահովում,

4) Հանձնաժողովի ապրանքանյութական արժեքների ստացման, պահպանման, տրամադրման և հաշվառման աշխատանքների իրականացում,

5) Հանձնաժողովի վարչական շենքի կոմունալ ծառայությունների տեխնիկական սպասարկման ապահովում, և ըստ անհրաժեշտության շենքի ընթացիկ կամ հիմնական վերանորոգման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

6) Հանձնաժողովի էլեկտրաէներգիայի, հեռախոսակապի, կապի, գազի մատակարարման, ջրամատակարարման բնականոն աշխատանքների ապահովում՝ համագործակցելով համապատասխան մարմինների հետ,

7) Հանձնաժողովին և աշխատակիցներին օգտագործման հանձնված գույքի գույքագրման աշխատանքների մասնակցություն,

8) Հանձնաժողովին և աշխատակիցներին օգտագործման հանձնված գույքի պարբերական զննման իրականացում, և ըստ անհրաժեշտության դուրսգրման ենթակա ապրանքների ցանկի ներկայացում,

9) Հանձնաժողովի պահեստի ապրանքաշրջանառության վերահսկում,

10) նյութական արժեքների եռամսյա գույքագրման իրականացում, և տվյալների համեմատում հաշվապահական տվյալների հետ,

11) Հանձնաժողովի աշխատակիցներին անհրաժեշտ ապրանքների հատկացում՝ համաձայն Հանձնաժողովի գլխավոր քարտուղարին ներկայացված պահանջագրերի,

12) ըստ հանձնարարականի Հանձնաժողովի գնման գործընթացներին մասնակցություն,

13) Հանձնաժողովի էլեկտրական և սանտեխնիկական սարքավորումների վերանորոգման աշխատանքների վերահսկում, և ըստ անհրաժեշտության դրանց փոխարինման ընթացքի ապահովում,

14) Հանձնաժողովի վարչական շենքի վիճակի վերահսկում և ձմեռային շահագործման անցնելու նախապատրաստական աշխատանքների իրականացում,

15) Հանձնաժողովի հակահամաճարակային պահանջների և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանության ապահովում,

16) Հանձնաժողովի համակարգչային տեխնիկայի անխափան աշխատանքի ապահովում,

17) բենզինի կտրոնների ստացում, տրամադրում, հաշվառում և ամսական կտրվածքով հաշվետվության ներկայացում,

18) Հանձնաժողովի պահեստի պահպանության ապահովում:

**2. Փորձագետ ներգրավելու ժամկետը**. մինչև 2026 թվականի փետրվարի 10-ը ներառյալ:

**Փորձագետի աշխատավարձը** կազմում է 267 072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ:

**3. Փորձագետի պարտականությունները.**

1) բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները,

2) պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

3) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

4) պահպանել անձնական տվյալների պաշտպանության ոլորտին վերաբերող իրավական ակտերի պահանջները,

5) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

**4. Փորձագետներին ներկայացվող պահանջները.**

1) առնվազն արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթություն,

2) երեք տարվա աշխատանքային ստաժ կամ տնտեսության սպասարկման բնագավառում աշխատանքի երկու տարվա ստաժ:

**5. Դիմումների ընդունման վերջնաժամկետը.** 2025 թվականի հուլիսի 11-ը ներառյալ:

**6. Աշխատանքի վայրը՝** ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15:

7. **Չի թույլատրվում պայմանագիր կնքել**, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիրառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

**8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝**

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն,
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

**9. Դիմողի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.**

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով **(դիմումի ձևը կցվում է),**
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր),
- աշխատանքային գրքույկ (աշխատանքային գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթեր),

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայական՝ պատճենները բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,
- մեկ գունավոր լուսանկար 3Х4 սմ չափի,
- անձնագիր կամ նույնականացման քարտ,
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք,
- ինքնակենսագրական,
- հայտարարություն ՀՀ կառավարության 02.08.2018 թ. N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (**հայտարարության ձևը կցվում է**):

10. **Փաստաթղթերը ընդունվում են** առձեռն և էլեկտրոնային եղանակով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի **hr.cpcarmenia@gmail.com** էլեկտրոնային փոստի միջոցով:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել 012-77-77-24 հեռախոսահամարով: